

ԳՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ

## Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ — «ՂՐԻՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964, 428 էջ:

Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել Վ. Ա. Միքայելյանի արժեքավոր մենագրությունը՝ նվիրված Ղրիմի հայկական գաղութի պատմությանը: Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է ինչպես Նրևանի Մատենադարանի ձևագրերը, արխիվային նյութերը, հիշատակարանները, հայերեն և ռուսերեն պարբերական մամուլը, այնպես էլ Մոսկվայի և Լենինգրադի պանագան արխիվների ֆոնդերը, հայերեն և օտար լեզուներով լույս տեսած ու անտիպ բազմաթիվ աշխատություններ, ժողովածուներ, Ղրիմի հայկական հուշարձանները: Նրա ուշադրությունից չեն վրիպել նաև չհրապարակված դիտարկումները:

Հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության տեսողաշարից դուրս մնացած տակավին խոպուն բնագավառներից է և կապված է առանձնահատուկ դժվարությունների հետ: Դժվարությունը արտահայտվում է ոչ միայն նրանով, որ, որպես կանոն, հայ գաղութների պատմության աղբյուրներն ու նյութերը ցրված են և բազմազան, այլև թեմայի բնույթով, որը հեղինակից պահանջում է համակողմանի ուսումնասիրության եղանակով ներկայացնել գաղութի թե՛ քաղաքական, սոցիալ-տնտեսական և թե՛ մշակութային կյանքը՝ զուգորդված տվյալ երկրի պատմության ելնէջքներին: Միքայելյանին հաջողվել է հաղթահարել թեմայի այդօրինակ դժվարությունները. նրա մենագրությունը լայն է ու բազմակողմանի, այն գրված է մեթոդոլոգիական և գիտական բարձր մակարդակով:

Գիրքը շարադրելիս հեղինակը չի սահմանափակվել սոսկ Ղրիմի հայ գաղութի պատմությանը. նա Անդրկովկասի, Ռուսաստանի, Սևծովյան ավազուտի և Մերձավոր Արևելքի երկրների ժողովուրդների պատմության ընդհանուր ֆոնի վրա, մարքսիստ պատմաբանի խորաթափանցությամբ, կարողացել է վեր հանել և ամբողջացնել հայ ժողովրդի այգ վիթխարի հատվածի պատմությունը, որը գիտական մեծ հետաքրքրություն և ակտուալ նշանակություն ունի ոչ միայն հայկական միջնադարի և հայ գաղթականության, այլև Սովետական Միության ժողովուրդների պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար:

Վերոհիշյալ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում մենագրության «Տավրիկյան հայերը Ղրիմ — Մոսկովյան (ռուսական) քաղաքական և առևտրական առնչություններում» ենթագլուխը, ուր նոր փաստեր են բերվում խորը հասկանալու ռուս ժողովրդի և նրանից հարավ գտնվող լայնածավալ «Դաշտ ի Ղփչաղ»-ի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները:

Ղրիմի հայկական գաղութի պատմության որոշ հարցերին տարբեր առնչություններով անդրադարձել են մի շարք հեղինակներ իրենց ուսումնասիրություններում և հոգիվածներում. դրանցից առանձնապես ուշադրության արժանի են Մ. Իժմեյանի «Ճանապարհորդություն ի Լեհաստան...», Լ. Տեր-Աբրահամյանի «Պատմություն հրիմու...», Ք. Վ. Քուշներյանի «Պատմություն գաղթականության հրիմու հայոց», Ռ. Պապկանյանի «Նոր նախնիների հիմնարկության պատմությունը», Ա. Ալպոյանյանի «Պատմություն հայ գաղթականության», Ա. Յակոբսոնի «Армянская средневековая архитектура в Крыму», Խ. Փորթլանդի «Նոր է կատարվել հայերի մուտքը Ղրիմ», Ծ. Ս. Զեկինի և Ն. Պ. Պենյուշի «Из истории социальных отношений в генуэзских колониях», Պ. Թումանյանի «Ղրիմի հայերը» և այլոց դրքերն ու հոգիվածները:

Սակայն նշված հեղինակները նպաստակ չեն ունեցել հատուկ ուսումնասիրության նյութ դարձնելու զրիմահայ գաղութի ամբողջական պատմությունը: Գրախոսվող մենագրության հեղինակին հաջողվել է իր տեքստին ու համառ պրպտումների շնորհիվ ձևագրելից ու արխիվներից հայտնաբերած բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա շարադրել Ղրիմի հայ գաղութի ամբողջական պատմությունը, որը գիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում մեր պատմագրության համար:

Վ. Միքայելյանի մենագրությունը իր մեջ ընդգրկում է պատմական երկար ժամանակաշրջան. նա հանգամանորեն լուսարանում է հայ ժողովրդի տեղահանումը իր հարազատ երկրից և նրա գաղթը դեպի Ղրիմ, մի ժողովուրդ, որը օտար նվաճողների վայրագություններից ազատվելու և իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար հարկադրված է եղել հեռանալ հայրենիքից և ապաստան փնտրել օտար երկրներում. Հայերը, հեռանալով մայր Հայաստանից, բնակություն են հաստատում Վրաստանում, Մերձավոր Արևելքում, Բյուզանդական կայսրության մեջ և հատկապես Սև ու Միջերկրական ծովերի առափնյա նշանավոր քաղաքներում, ուր նրանք ոչ միայն ապահովում են իրենց ապրուստի միջոցները, այլև մասնակցում այդ քաղաքների տնտեսական ու քաղաքական կյանքին: Հայերի մի խոշոր հատված, տարբեր ժամանակներում փոխադրվելով Ղրիմի թերակղզու ծովափնյա քաղաքները, այնքան է ուժեղանում, որ ժամանակի պատմական գրականության մեջ Ղրիմը նույնիսկ «Armenia maritima» («Մովսային Հայաստան») անունն է ստանում:

Հիմնական պրոբլեմներից մեկը, որը հանդիսացել է Վ. Միքայելյանի քննության առարկան, գաղթիմահայ գաղութի սկզբնավորման հարցն է. մի կնճռոտ խնդիր, որի շուրջը գոյություն ունեին տարբեր կարծիքներ, թեև պրոբլեմն ինքնին ցարդ առանձին վիճարկման կամ հատուկ քննության չէր ենթարկված:

Հակառակ մի բանի հեղինակների սխալ կարծիքների, հեղինակներ, որոնք Ղրիմի հայկական գաղութի սկիզբը համարում են 14-րդ դարը, Վ. Միքայելյանը հայ ու օտար աղբյուրներից բաղված փաստերով հիմնավորում է, որ հայերը ավելի վաղ ժամանակներից են բնակություն հաստատել Տավրիկիայում: Նոր փաստերի լույսի տակ նա ցույց է տալիս, որ դեռ մոնղոլական նվաճումներից շատ առաջ բազմաթանակ հայ ընտանիքներ մշտական բնակություն էին հաստատել Ղրիմի թերակղզու ծովափնյա զանազան մասերում: Հեղինակը հիմնավոր կերպով մերժում է այն գիտնականներին, որոնք կամա թե ակամա Ղրիմի հայկական գաղութի սկիզբը համարել են 1330 թվականը, այսինքն հայերի՝ Ախսարայից Ղրիմ կատարած գաղթը: Փաստերի մեջբերմամբ նա հաստատում է, որ արդեն 11—15-րդ դդ. Տավրիկիայի մի շարք քաղաքներում կար «մշտական հայ բնակչություն» (էջ 26): Դրա հետ մեկտեղ գրքում պարզված են այն ուղիները, որոնցով հայ գաղթականական հոսանքները թափանցել են Ղրիմ: «11-րդ դարի ընթացքում,— գրում է Վ. Միքայելյանը,— արդեն նկատելի է հայերի համեմատաբար մեծ զանգվածային տեղաշարժ Բալկաններից դեպի Սև ծովի հյուսիսային շրջանները, և ևս առանձնապես Ղրիմ» (էջ 42): Այնուհետև հեղինակը հաստատում է, որ հայերը Ղրիմ են փոխադրվել Կոստանդնուպոլսի վրայով, ինչպես «նաև ուղղակի Փոքր Ասիայից, հատկապես Տրապիզոն — Ղրիմ և Սիւնոպ — Ղրիմ ծովափին ուղիներով» (էջ 43): Հեղինակի բերած փաստերը միանգամայն համոզել են:

Միքայելյանի մենագրության մեջ լայն տեղ է հատկացված Ղրիմահայ գաղթօջախները ներքին կյանքի բազմակողմանի ուսումնասիրությանը: Ընթացին, գովելի է նաև այն, որ նա այդ հարցերը շարադրելիս Ղրիմի հայկական գաղթօջախները մեխանիկորեն չի անջատել մեկը մյուսից, այլ հարցերը լուսարանել է թեմատիկ առումով, դրանով իսկ ցույց տալով այն ընդհանրությունը, որ հատուկ է եղել տեղի բոլոր հայ գաղթօջախներին: Հեղինակին հաջողվել է հանգամանորեն ուսումնասիրել Ղրիմի հայ բնակչության սոցիալական կազմը, դասային շերտավորումը, նիստ ու կացը, զբաղմունքները և գաղութում տիրած սոցիալ-քաղաքական և իրավական հարաբերությունները: Նա ցույց է տալիս, որ Ղրիմի քաղաքներում առևտրի, արհեստագործության և արվեստի զարգացման մեջ մեծ դեր է ունեցել հայ ազգաբնակչությունը: Հեղինակը փաստերով համոզում է, որ Ղրիմի քաղաքներում կոշկակարությունը, ջուլհակությունը, կավագործությունը, դերձակությունը, դարբնությունը և բազմաթիվ այլ արհեստներ հանդիսացել են հայերի հիմնական զբաղմունքները:

Գրքում ուշադրություն է և՛վերված Տավրիկյան թերակղզու վրա հայ ազգաբնակչության տեղաբաշխման խնդրին: Ինչպես մյուս, այնպես էլ այս հարցը լուսաբանելիս հանդես բերելով պաշտոնական և անօրինական, հեղինակը կարողացել է հստակ կերպով լուծել այդ խնդիրը: Ընդ որում, նա ցույց է տվել պատմական ղեկավարի կապակցությամբ Ղրիմահայ բնակչության իվական կազմում կատարված փոփոխությունները՝ մինչև 15-րդ դարը և ապա՝ 15—18-րդ դարերին: Այս բաժնում հեղինակը քննարկում է նաև Ղրիմահայ քաղաքային բնակչության հարցը: Գրքում բերված են բավական նյութեր, որոնցից կարելի է եզրակացնել, որ, օրինակ, Կաֆա քաղաքում 1470-ական թվականներին ապրելիս են եղել մոտ 47 հազար հայեր, որ հայաշատ քաղաքներ են եղել նաև Ղարասուրազարը (այժմ Բելոգորսկ) և Սուրիաթը (այժմ Հին Ղրիմ):

Ղրիմի հայերը հիմնել են բազմաթիվ բնակավայրեր, կառուցել են մի քանի տասնյակ եկեղեցիներ, վանքեր, կամուրջներ, պաշտպանական պարիսպներ, ունեցել են դպրոցներ և նույնիսկ իրենց սեփական զորքը» (էջ 108)։

Ղրիմի հայերի զգալի մասը զբաղվել է նաև գյուղատնտեսությամբ՝ հատկապես այգեգործությամբ և զինեզործությամբ։ Հայն է յուսարանված հայերի դերը Ղրիմի և լեռնային առևտրի մեջ։ Հայ վաճառականները ռուսների և իտալացիների հետ միասին Ղրիմի վրայով առևտրական կապեր են ստեղծել Արևելքի և Արևմուտքի բազմաթիվ երկրների միջև։

Գիտական արժեք է ներկայացնում աշխատության «Կաֆայի անկումը և տափրիկահայերի գլուխը Փաստական նյութի օգնությամբ հեղինակը հիմնավոր կերպով հերքում է իտալոֆիլ բուրժուական մի քանի հեղինակների, որոնք անտեսելով թուրքական զորքերի առաջնադասն կապակցությամբ 15-րդ դարի 2-րդ կեսին Սև ծովի ավազանում ստեղծված արտաքին ու ներքին ծանր պայմանները, փորձել են Կաֆայի անկման պատճառը հիմնականում «մեկնաբանել» քաղաքի հայ ազգաբնակչության «ղափաճանությամբ»։ Բացառելով Կաֆայի անկման կապակցությամբ հայերի «ղափաճանության» մասին նետրովի կարծիքը, Վ. Միքայելյանը ցույց է տվել թուրքերի նվաճողական քաղաքականության հետևանքով ստեղծված ծանր վիճակը և դրա հետևանքով քաղաքի անկման պատճառները։ Այդ գլուխը ուղղորդվ է նաև նրանով, որ այնտեղ լուսարանված են Ղրիմում թուրքական գերիշխանության հաստատումից հետո հայ զաղթյալների կյանքում առաջացած տեղաշարժերը։

Վ. Միքայելյանը առանձին բաժնով տեղադրած է Հայաստանի և հայկական մյուս զաղթյալների հետ զրիմահայերի ունեցած քաղաքական, առևտրական և մշակութային կապերին, տվել է դրանց նշանակությունը զաղթյալի կուլտուր-տնտեսական կյանքում։

Գրախոսվող մենագրության մեջ կարևոր տեղ է տրվում հայ-ռուսական, հայ-ուկրաինական, հայ-չեռնովական և հայ-թաթարական տնտեսական ու քաղաքական հարաբերություններին։ Հեղինակը վեր է հանել այդ հարաբերությունների և կապերի առաջացման պատմական պայմանները և դրանց դերը մանավանդ ռուս ժողովրդի հետ ունեցած բարեկամության ամրապնդման գործում։

Մենագրության մեջ հեղինակը առանձին գլխով ուսումնասիրել է զրիմահայ մշակույթը՝ նրա բոլոր էությունով հանդերձ։ Նա անդրադարձել է զրիմահայ մշակույթի աչքի ընկնող ներկայացուցիչների գործունեությանը, ներկայացուցիչներ, որոնք նշանակալից դեր են կատարել հայ մշակույթի զարգացման ու տարածման գործում։ Նա լուսարանել է տաղասացներ Սիմոն Կաֆայեցու, Խաչատուր Կաֆայեցու, Մարտիրոս Ղրիմեցու, Ստեփանոս Թոխատեցու, Վսրդան Կաֆայեցու, ինչպես նաև հայ ճարտարապետների, մանրանկարիչների և գրիչների գործունեությունը։

Վ. Միքայելյանի մենագրության արժանիքներից մեկն էլ այն է, որ նա չի խուսափել բանավեճի մեջ մտնելու մի շարք հեղինակների հետ և շալադրելու իր ինքնուրույն տեսակետը։ Դիտարկելով մի շարք հեղինակների սխալ կարծիքները, նա տալիս է իր մեկնաբանությունները, որոնք գիտական են և ընդունելի։ Բերենք մի օրինակ։ Հեղինակը համարձակ և արդարացի բանավեճի մեջ է մտնում Խ. Ա. Փոքրչյանի և Յա. Գալկելիի հետ։ Խ. Ա. Փոքրչյանի հետ Վ. Միքայելյանը վիճում է այն բանի համար, որ վերջինս փորձել է ապացուցել, որ իբր թե 1062 թ. ռուս իշխան Դմիտրի Թեոդորովիչը օգնության է դիմել ոչ թե Ղրիմի հայերին, այլ կոստյա հայերին, այսինքն շերբեղահայերին։ Հեղինակը ստուգաբանելով «kosochaki» բառը այն միտքն է հայտնում, որ թերևս ռուս իշխանի հրովարտակը վերաբերում է «Ղրիմի երբեմնի հայաշատ գյուղաքաղաք Կազարաթին» (էջ 52) հայերին, թեև հարցի լուծումը ինքը «տակավին թողնում է բաց» (էջ 54)։

Վ. Միքայելյանը ափսիս հիմնավոր քննադատում է Յա. Գալկելիին, որը իր «Грамота Феодора Дмитриевича 1062 г.» հոդվածում ոչ միայն ժխտում է ռուս իշխանի՝ հայերին տված դերհիշյալ հրովարտակը, այլև անհիմն կերպով հայտարարում է, թե հայերը, լինելով փախստականներ, ինչ էլիս իրենցից ներկայացնում, որ արժանանային ռուս մեծ իշխանի ուղղործությանը, որ վերջինս կարիք զգար նրանց օգնության հրավերելու «որպես զորք» (էջ 55)։ Հեղինակը պատմական փաստերով հերքում է Յա. Գալկելիի այդ անհիմն տեսակետը և ցույց տալիս, որ հոդվածագիրը ժխտում է ամբողջ հոդվածով անցկացնել այն միտքը, թե 11—14-րդ դդ. Գալիցիայի տերիտորիայում չլեղել հայկական բնակչություն, և դրանով իսկ փաստորեն հերքում է հայ-ռուսական կապերը նշված շրջանում» (էջ 54)։ Իր բազմաթիվ փաստարկումների հետ միասին Վ. Միքայելյանը վկայակոչում է նաև սովետական ականավոր գիտնական Մ. Ն. Տիխոմիրովին, որը խոսելով հայ և ռուս ժողովուրդների դարավոր կապերի մասին, ի միջի այլոց, կանգ է առնում նաև Գալկելիի այդ սխալ տեսակետի վրա։ Նկատի ունենալով 1062 թ.

վերոհիշյալ հրովարտակը, Մ. Ն. Տիխոմիրովը ասել է. «այդ փաստաթուղթը կասկածի է ենթարկել լիովին գիտնական Յա. Դաշկևիչը և իմ կարծիքով սխալ կերպով: Նա գտնում է, որ հրովարտակը կեղծված է: Անհերքելի փաստարկներն են շի բերում... Հապա ի՞նչ իրավունք ունի Դաշկևիչը իր գլխից «փաստեր» հնարել և աննշան այդ «փաստերը» համարել արժանահավատ» (էջ 57):

Յա. Դաշկևիչի այդ սխալ տեսակետը ևեղ է գտել նաև նրա «Ուկրաինայի հայ գաղութները 15—19-րդ դարերի աղբյուրներում և ուսումնասիրություններում» գրքում: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը այս կապակցությամբ քննարկեր Յա. Դաշկևիչի գրքի այդ մասը:

Իր աշխատությունը Վ. Միքայելյանը ավարտում է 1778 թվականով: Պատմականորեն նման պարբերացումը միանգամայն ճիշտ է: Հարցն այն է, որ այդ թվականին դրիմահայ միջնադարյան գաղթօրյախները դադարեցին գոյություն ունենալ: Այս խնդրին, այսինքն դրիմահայ գաղութի վերացման հարցին է նվիրված աշխատության վերջին գլուխը: Պատմական փաստաթղթերի լայն մեկնարանմամբ հեղինակը քննարկում է այն շարժառիթները, որոնցից ելնելով նկատերինա 2-րդը և ուսական կառավարությունը իրականացրին Ղրիմի քրիստոնյա բնակչության՝ հայերի և հույների արտագաղթեցումը ղեկավարելու նախագիծը: Այդ շարժառիթները, հեղինակի հիմնավորմամբ, կայանում էին նրանում, որպեսզի Ղրիմի համար Քուրքիայի հետ մղվող պայքարի այդ եռուն շրջանում Ղրիմի խանն ու նրա կառավարությունը քաղաքական, տնտեսական և ֆինանսական կախվածության մեջ դրվեին ուսական արքունիքից: Քրիստոնյա բնակչության տեղափոխումը Ղրիմից մեծապես նպաստեց ինչպես Հարավային Ռուսաստանի բնակեցմանը, այնպես էլ վերոհիշյալ խնդրի իրականացմանը, որովհետև խանը զրկվեց արտադրող և հարկատու դասից, իսկ խանական զանձարանը՝ քրիստոնյաներից ուսացվող եկամուտներից և կախման մեջ ընկավ ուսական արքունիքից:

Վ. Միքայելյանը իր աշխատությունը գրել է գիտական բարձր մակարդակով, կիրթ լեզվով և բանիմացությամբ: Իրարժեք գնահատելով արժեքավոր այս մենագրությունը, կցանկանայինք այդ առթիվ անել մի քանի դիտողություններ:

Խոսելով 11-րդ դարում հայերի՝ ղեկավար Ղրիմի թերակղզին գաղթելու մասին, հեղինակը հայ մատենագիրներից մի շարք հետաքրքիր նյութեր է բերում: Իայց, դրանց կողքին, նա նշում է նաև այնպիսի փաստեր, որոնք անմիջականորեն առնչվում են ոչ թե հայերի Ղրիմ կատարած զաղթի, այլ առհասարակ Հայաստանից կատարված արտագաղթի հետ: Այսպես, օրինակ, Վասպուրականի Սենեքերիմ իշխանի և Կարսի թագավոր Գագիկի 11-րդ դարում Մեծ Հայաստանից գաղթելու հարցը կապված է Կիլիկիայի հետ:

Մենագրության մեջ հետաքրքիր նյութեր են բերված Ղրիմի հայերի քաղաքական գործունեության մասին: Սակայն ցանկալի էր, որպեսզի հեղինակը այդ հարցը ավելի լայն լուսարաներ:

Գրախոսվող աշխատության հեղինակը չի անտեսել Կիլիկիայի հայոց թագավորության և Ղրիմի հայ գաղութի առնչությունների հարցը: Նա լուսարանել է Ղրիմի հայերի՝ Կիլիկյան Հայաստանի հետ ունեցած առևտրական, կրոնական և մշակութային կապերը, բայց նա հանգամանորեն կանգ չի առել այն գերի վրա, որ խաղաղին Կիլիկիայի հայերը Ղրիմի հայ գաղութի հզորացման գործում: 1375 թ. կորցնելով իրենց պետականությունը, Կիլիկիայի հայերը սկսեցին փոխադրվել նաև Ղրիմ, որտեղ նոր թափ հաղորդեցին տեղի հայ գաղութի քաղաքական, տնտեսական և հատկապես մշակութային կյանքի զարգացմանը:

Հանախ սովետական շրջանի հայադիտական գործերում հանդիպում ենք «Ելխանություն» տերմինին: Դրանից էլ, ըստ երևույթին, ազդվել է գրախոսվող մենագրության հեղինակը, գործածելով «Ելխանություն» բառը: Այդ տերմինը մոնղոլական ծագում ունի: Արմատը «Ելխան»-ն է, որը նշանակում է «ծողովորդի պետ», այստեղից էլ ոչ թե «Ելխանություն», այլ «Ելխանություն»:

Աշխատության մեջ գետնդրված են մի շարք նկարներ: Սակայն դրանց մեջ կան երկուսը, որոնց մակագրությունից հայտնի չի դատում, թե որտեղ են դրանք այժմ գտնվում. խոսքը վերաբերում է «Փայտե դռներ» մակագրությանը:

Այս դիտողությունները որակ չեն կազմում և ամենին չեն կարող ստվեր գցել Վ. Միքայելյանի արժեքավոր մենագրության վրա. ուր խոշոր ներդրում է սովետահայ պատմագրության մեջ:

Հուսով ենք, որ այն կթարգմանվի նաև ռուսերեն: